ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 14, կիրակի:

Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալըստեանն Քրիստոսի ի տաճարն.

Օրվա մեծ տոնի առիթով Հայոց Հայրապետը Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և եպիսկոպոսական ձեռնադրություն կատարում՝ ի պաշտաոնություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից և Տեառնընդառաջի նախատոնակից հետո, Իշման Ս. Սեղանի առաջ կատարվում է նորընծաների «ընտրութիւն և ուխտադրութիւն՝ ըստ սահմանի Հայոց Եկեղեցոյ» կարգը:

Նորընծաներ Տ. Եղիշե ծայրագույն վարդապետ Կիզիրյանը, Տ. Ոսկան ծայրագույն վարդապետ Գալբակյանը, Տ. Աղան ծայրագույն վարդապետ Բալիոզյանը, Տ. Նորվան ծայրագույն վարդապետ Զաքարյանը և Տ. Ավագ ծայրագույն վարդապետ Սասունյանը ծնրադիր ուխտում են «անխոտոր և անսայթաք» ընթանալու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ուղղափառ հավատքի և վարդապետության շավղով, հավատարիմ լինելու **«Սրբոյ Էջմիածնի մինչև զվախճան կենաց իւրեանց, կալ մընալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյս, և ծառայել երկիւղիւ Տեառն, յօգուտ և ի փառս անսասան Սրբոյ Էջմիածնի»:**

Ապա եպիսկոպոսացման երդումնագրի ընթերցումից հետո նորընծաները ստորագրում են այն: Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը և Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս սրբազանները վկայում են ուխտադրությանը:

Արարողությունից հետո նորընծաները առաջնորդվում են Վեհարան, որտեղ Հայոց Հայրապետը ընդունում է նորընծաներին, օրհնում և «Պահպանիչ»-ով խրախուսում:

Կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Մայր տաճարի Ս. Ստեփանոսի Սեղանի առաջ, Իրեն առընթերակա ունենալով Տ. Նարեկ և Տ. Գևորգ եպիսկոպոսներին, բազմած Հայրապետական Աթոռի վրա, սկսում է ձեռնադրության կարգը՝ աղոթքով ու օրհնությամբ, ըստ Ձեռնադրության Մաշտոցի հրահանգի, շնորհում է եպիսկոպոսական իշխանության յոթ աստիճաններ:

Օրվա ձեռնադրության արարողության խարտավիլակի պաշտոնը կատարում է Տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը բարձր ձայ-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է ՃԱԿԱՏԸ Տ. ՈՍԿԱՆ ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է ՃԱԿԱՏԸ Տ. ԱՂԱՆ ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

նով հայտարարում է՝ «Ծնորհազարդ Սուրբ Հայրապետ... զի միաբանք մեծի՝ Սրբոյ և առաքելական Աթոռոյս Էջմիածնի, հանդերձ համօրէն և ուխտիւս, այսինքն, եպիսկոպոսունք, քահանայք, սարկաւագունք... այլ և իշխանք և աղքատք, խնդիր ունիմք և բարձրագահ Տէրութենէդ, վասն որոյ հայցեմք աղաչանօք, զի հրամայեսցես մեզ յանդիման լինել մեծանձնութեան քո ի բացայայտել զխնդիր մեր»:

Լսվում է Հայրապետի պատասխանը. «Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ ընդառաջ մատչել և ողջամիտ դիտաւորութեամբ բացայայտել Մեզ զոր ինչ խնդրէքդ»:

Նորընծաները ծնրադիր աղոթում են Իջման Ս. Սեղանի առաջ և համբնթաց մոտենում Հայոց Հայրապետին՝ տալու իրենց հավատի ուղղափառ խոստովանությունը և ստանալու եպիսկոպոսության աստիճաններ: Հայրապետական աղոթքով և օրհնությամբ տրվում է նորընծաներին եպիսկոպոսական աստիճանի համապատասխան եկեղեցական զգեստ:

Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է ձեռնադրության հանդեսի այս առաջին մասը:

Ավագ խորանի վրա սկսվում է հայրապետական հանդիսավոր ս. պատարագը, որը շարունակվում է մինչև ճաշու գրքի ընթերցումը:

Մայր տաճարի դասերում տեղ են գրավել թեմերից եկած ազգային—եկեղեցական իշխանության պաշտոնական ներկայացուցիչներ, ինչպես նաև նորընծաների ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած ծնողներ, հարազատներ ու բարեկամներ:

Ձեռնադրության և օծման արարողություններին ներկա են նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը ու տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Ձեռնադրիչ Հայոց Հայրապետը բազմում է Իր Աթոռի վրա՝ շրջապատված հինգ նորընծաներով:

Նորին Սուրբ Օծությունը ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը: Նվիրյալները ծնրադիր դեմքերը դարձնում են դեպի հավատացյալ ժողովուրդը՝ ձեռքերը վեր բարձրացրած: Նրանք հանդիսավոր և հրապարակայնորեն հրաժարվում են աշխարհից, նրա ունայնություններից և պատրանքներից:

Մայր տաճարի կամարների ներքո վեհ ու հանդիսավոր հնչում է կոչման շարականը՝ «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ զԵղիշէ, զՈսկան, զԱղան, զՆորվան և զԱւազ վարդապետսն ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»:

Կոչման սույն շարականը կրկնվում է երեք անգամ: Նորընծաները դառնում են դեպի Հայոց Հայրապետը և շարվում Նրա Աթոռի շուրջ: Հայոց Հայրապետը ընթերցում է ձեռնադրության աղոթքը, որպեսզի նորընծաները ճշմարտությամբ, հեզությամբ, ճգնությամբ և ժուժկալ համբերությամբ զարդարված անցկացնեն իրենց կյանքը և օրինակ դառնան իրենց սրբակրոն վարքով ու կենցաղով հավատացյալներին:

Մարգարեական, ավետարանական, առաքելական ընթերցվածքներից, սաղմոսներից, շարականներից հետո ս. պատարագը շարունակվում է նույն վեհությամբ և հանդիսությամբ մինչև «Ողջոյն»: Հայոց Հայրապետը նորից բազմում է Աթոռին և ընթերցում ձեռնադրության վերջին աղոթքը՝ «Լցո զսոսա Հոգւովդ Քով Սրբով, զօրացո՛ և յաջողեա՛ սոցա օգնականութեամբ Քով յամենայն գործս բարիս, որպէսզի կարասցեն անարատ վարուք ըստ կամաց Քոց բարեսիրաց հովուել երկնային իմաստութեամբ բանաւոր հօտի Քում»:

Այժմ ձեռնադրության խորհրդի վերջին՝ ամենախորհրդավոր պահն է, սրբալույս մեռոնով օծման պահը:

Նվիրյալները եպիսկոպոսական լրիվ զգեստավորման մեջ կանգնել են Հայոց Հայրապետի առաջ: Սկսվում է օծման սրբազան արարողությունը. «Օրհնեսցի, օծցի և սրբեսցի ճակատ, և բուրբ մատն աջոյ ձեռին...»:

Մի առ մի օծվում են Հայ Եկեղեցու սրբալույս մեռոնով նվիրյալների ճակատն ու ձեռքի բուրբ մատը: «Օծումն զոր հեղեր առատութեամբ ի գլուխ սոցա՝ սփռեսցի լիապէս ընդ ամենայն մարմինս սոցա... Մի դիցեն զլոյսն՝ խաւար և զխաւարն՝ լոյս, զչարն՝ բարի և զբարին՝ չար, այլ արդարութեամբ կացցեն ի գլուխ ժողովրդեան Քո», պատգամում է Հայոց Հայրապետը՝ ըստ Մաշտոցի հրահանգի:

Ապա համապատասխան աղոթքով տրվում են նորընծաներին եպիսկոպոսական գավազան և մատանի:

Հայոց Հայրապետի ««Պահպանիչ»-ով ավարտվում է եպիսկոպոսական ձեռնադրության և օծման սույն հոգեղից արարողությունը:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Քարոզի պահն է: Հայոց Հայրապետը օրվա եկեղեցական տոնի, ձեռնադրության

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՄԱՅՐԱԹԱՌ

և օծման հանդիսությունների առիթով խոսում է բովանդակալից քարոզ (Քարոզը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 7):

Սուրբ պատարագից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, նորապսակ սրբազանների հետ:

Ժամը 15-ին, օրվա հանդիսությունների ուրախ առիթով, Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են լինում նորապսակ սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը և արտասահմանից ժամանած եկեղեցական իշխանությանց ներկայացուցիչները, այդ թվում՝ Լիոնի եկեղեցական խորհրդի ատենապետ տեր և տիկին Սեպուհ Սարյանը, Վալանսի կրոնական իշխանության ատենապետ տիար Մանուկ Ստեփանյանը, Լիոնից՝ Մայր Աթոռի բարերարներ տիար Մանուկյանը և տիար Փափազյանը, Աթենքից՝ Վահե Աղասյանը, Բաղդադից՝ Իրաքի Ազգային-Եկեղեցական Կենտրոնական Վարչության ատենապետ Տիրան Օհանյանը, Դամասկոսից՝ Ազգային-Գավառական Ժողովի անդամ և Ազգային-Քաղաքական Ժողովի ատենապետ դոկտ. Լևոն Յագուպյանը, Ազգային-Գավառական Ժողովի անդամ և Ազգային-Քաղաքական Ժողովի ատենադպիր տիար Արմեն Օհանյանը, Ազգային-Գավառական Ժողովի փոխատենապետ տիար Վարդգես Պողոսյանը, Ազգային-Քաղաքական Ժողովի փոխատենապետ տիար Գևորգ Հարությունյանը, Ազգային-Տնտեսական Ժողովի ատենապետ տիար Գրիգոր Բարսեղյանը, Ազգային-Քաղաքական Ժողովի անդամ տիար Սարգիս Կարապետյանը, Ազգային-Քաղաքական Ժողովի անդամ տիար Մանուկ Պալյանը, Սվստրալիայից Հովհաննես սարկավագ Գարաջյանը, տեր և տիկին Հ. Իսկենդերյանը

Ճաշկերույթին ներկա էին նաև Տանն Կիլիկիայի Անթիլիասի Աթոռի միաբան Տ. Եփրեմ եպս. Բապուջյանը և Լիոնի «Քրիստոնեական Միության» էկումենիկ կենտրոնի դիրեկտոր հայր Պիեռ Միշելոնը, որոնք հյուրաբար գտնվում էին Մայր Աթոռում, եպիսկոպոսական ձեռնադրության առիթով:

Ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանը և տեղակալ Ա. Հասրաթյանը:

Ընդունելության ժամանակ առաջինը Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը և եպիսկոպոսական ձեռնադրության առիթով շնորհավորում է Տ. Հուսիկ արքեպիսկոպոսը:

Նորապսակ Տ. Եղիշե, Տ. Ղսկան, Տ. Աղան, Տ. Նորվան, Տ. Ավագ սրբազանները որդիական երախտագիտության և շնորհակալության իրենց խոսքն են ասում այս առթիվ Հայոց Հայրապետին ուղղյալ:

Տիկին Ազնիվ Իսկենյանը (Սիդնեյ), տիար Վահե Աղասյանը (Աթենք), տիար Մանուկ Ստեփանյանը (Վալանս) նույնպես ջերմորեն շնորհավորում են ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետի անվանակոչության տոնը և նորապսակ սրբազանների ձեռնադրությունը, նրանց ապագա եկեղեցանվեր ծառայության բարեմաղթություններով:

Հայոց Հայրապետի անվանակոչության տոնը և նորապսակ հինգ սրբազաններին շնորհավորում է նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռ. Պարսամյանը:

Վերջում խոսք է առնում նաև Հայոց Հայրապետը, մի անգամ ևս ջերմորեն շնորհավորում նորապսակ եպիսկոպոսներին՝ շնորհելով նրանց եպիսկոպոսական պանակ, և ցանկանում նրանց տեսնել միշտ Մայր Աթոռի և Հայ Եկեղեցու նվիրյալ և լավագույն ծառայողների շարքում:

Փետրվարի 14-ը ուրախության և հոգևոր բերկրանքի տոն էր Մայր Աթոռի համար, Հայաստանյայց Եկեղեցու համար, որովհետև մեր եկեղեցական բարձրագույն սպասին ծառայելու էին կոչվել հինգ խոստումնալից նոր իշխանավորներ, որպես արժանավոր եպիսկոպոսներ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է ՃԱԿԱՏԸ Տ. ՆՈՐՎԱՆ ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է ՃԱԿԱՏԸ Տ. ԱՎԱԳ ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ